

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ՍԵՅՖ ՊՐՈՋԵԹՍ» ՍՊԸ-ն ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-90/26 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի
	տեխնիկական բնութագիրը
18	Նյութը՝ 100% պոլիպրոպիլեն՝ չժանգոտվող պողպատից ներդիրի փականով: Կառուցվածքը պետք է բացառի դրա բաղադրամասերի, ըստ նշանակության, կրկնակի օգտագործումը: Ընդհանուր երկարությունը՝ 305÷310 մմ: Աշխատանքային մասի երկարությունը՝ 220÷230 մմ: Աշխատանքային մասի հաստությունը՝ 2,3 մմ: Ամրացումը՝ ձեռքով: Հսկիչ համարն ու սերիան՝ մինչև 8 նիշ: Միջին պոկման դիմացկունությունը՝ 15 կգ: Դրոշմակնիքը պետք է ունենա ամենաբարձր կայունությունը չարտոնված բացման, մանիպուլյացիաների և հատուկ միջոցներով ներգործության դեմ, որոնց չափանիշը կազմում է 60÷100 նորմա-րոպե: Պետք է դիմակայի շահագործման պայմաններում օդի ջերմաստիճանի՝ - 40°C-ից մինչև + 60°C միջակայքին՝ մինչև 100% օդի հարաբերական խոնավության պայմաններում: Դրոշմակնիքը պետք է ունենա բարձր կայունություն կոռոզիայի նկատմամբ: Թվային նշագրման վերևում պետք է լինի «ՀԱԷԿ» ՓԲԸ գրառումը: Գրառումը և թվային նշագրումը պետք է իրականացվի ջերմային կնիքով կամ լազերային դրոշմմամբ: Դրոշմակնիքի վրայի գրառումները (այդ թվում թվային նշագրումը) պետք է լինեն հստակ ճանաչելի (ընթեռնելի), ինչպես նաև լինեն կեղծման և փոխարինման նկատմամբ կայուն, ապահովի դրանց հետքերի հայտնաբերումը, իսկ ցանկացած փոփոխություն՝ ուղեկցվի ակնհայտ վնասմամբ կամ ոչնչացմամբ: Դրոշմակնիքը պետք է նախագծված լինի այնպես, որ դրա հեռացումը առանց տեսանելի հետքերի անհնարին լինի: Փաթեթավորումը արկղերով: 1 արկղում նվազագույնը 1000 հատ: Արկղի վրա պետք է նշված լինեն արտադրման տարեթիվը, արտադրողի անվանումը, արկղի համարը, հերթական շտրիխ կոդերը: Նմուշը կցվում է:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

"СЕЙФ ПРОДЖЕКТС "ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом 24-ЕДХДП-90/26 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
18	